

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿԻ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻ


ՀԱՇՏԱՐԱՐ

ONLINE.FSM.AM


Անհրաժեշտ է մուտք գործել **online.fsm.am** կայք, որից հետո կբացվի պատուհան, որի «Գործի որոնում» բաժինը նախատեսված է հաճախորդների համար:

«Գործի որոնում» բաժնում անհրաժեշտ է մուտքագրել գործի **PIN** կոդը, որը ստացել եք **SMS** հաղորդագրությամբ այն հեռախոսահամարին, որը գրանցված է Հաշտարարի գրասենյակում, կարդալ հարթակի «Դրույթներն ու պայմանները», նշել ծանոթացել եմ «Դրույթներին ու պայմաններին» և սեղմել «Գտնել» կոճակը:


Մուտքանունը և գաղտնաբառը լրացնելուց հետո կբացվի նոր պատուհան: Բացված պատուհանում անհրաժեշտ է մուտքագրել ստուգման **PIN** կոդը, որը կստանաք էլեկտրոնային հաղորդագրության միջոցով այն էլ. փոստի հասցեին, որը գրանցված է Հաշտարարի գրասենյակում:




Ստուգման **PIN** կոդը մուտքագրելուց հետո կբացվի պատուհան, որտեղ կարող եք ծանոթանալ Ձեր գործի քննության ընթացքին, ինչպես նաև ստանալ կամ ուղարկել գործին առնչվող փաստաթղթեր: Նախքան համակարգ մուտք գործելն անհրաժեշտ է ծանոթանալ Գրասենյակի «Պահանջների քննության գործընթացը կարգավորող կանոններ»-ին և «Պահանջների քննության ընթացակարգ»-ին, կատարել համապատասխան նշում և սեղմել «Ծանոթացել եմ» կոճակը:




«Գործի մանրամասներ» ենթաբաժնում կարող եք տեսնել, թե որ փուլում է գտնվում Ձեր պահանջի քննությունը, Ձեր գործի մանրամասները և պահանջը քննող մասնագետի տվյալները:

«Ժամանակացույց» ենթաբաժնի միջոցով կարող եք հետևել Ձեր գործի քննության ընթացքին: Կանաչով նշված փուլը նկարագրում է գործի կարգավիճակը տվյալ պահի դրությամբ, իսկ նախորդ և հաջորդ փուլերին կարող եք ծանոթանալ այս կոճակի միջոցով՝ :

«Փաստաթղթեր» ենթաբաժնի միջոցով կարող եք վերբեռնել կամ ներբեռնել Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը և նյութերը: Ֆայլ վերբեռնելու համար «Ֆայլեր» ենթաբաժնից անհրաժեշտ է սեղմել **"Choose file"** կոճակը և համակարգչից ընտրել համապատասխան ֆայլը: Այնուհետև «Տեսակ» սյունակից անհրաժեշտ է ընտրել այն տարբերակը, որը համապատասխանում է Ձեր կողմից տեղադրված փաստաթղթին:



Հաշտարարի գրասենյակի կողմից տեղադրված ցանկացած փաստաթուղթ Դուք կարող եք ներբեռնել սեղմելով տվյալ փաստաթղթի վրա:



Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 70 11 11 հեռախոսահամարով, ներքին համար՝ 401: